

Պ Ղ Ա Տ Ո Ն

Սոկրատեսի պաշտպանողական նաոը

Ե Ր Կ Ո Ւ Խ Օ Ս Ք

Ներկայումս, երբ մարդիկ համարեան իդիալազուրկ են եղել, երբ դարաւոր աշխատանքներով ձեռք բերած ձգտման ու ոգևորութեան նիւթ եղող սկզբունքները ջախջախուել են, աւելի քան կարիք է զգացուում հաստատուն, ամուր սկզբունքների, համոզման ու հաւատալիքի գաղափարների: Առանց համոզման ու ձգտման և վերջապէս որոշ դէպքում՝ առանց հաւատքի կեանքը բացի դժգոհանալուց, անխմաստէ դառնում ու կանգ առնում:

Այս տեսակէտից արժէ մի անգամ յետադարձ հայեացք ձգել մարդկութեան համար նոր ուղի բացողների, սկզբունքի ու գաղափարի ախոյեանների վրայ: Այսպիսիներէից է Սոկրատը, որի մասին մեր գրականութեան մէջ աւելի քան քիչ բան կայ:

Պղատոնի այս գրութեան ժամանակը շուրջ 386, 7 թ/թ: Թարգմանութիւնը աւելի ազատ է քան բառացի: Մտքի պարզութեան համար ստիպուած եմ եղել նախադասութիւնները ընդարձակել: Ձեռքիս տակ ունեցել եմ նաև ուսսերէն թարգմանութիւններ և լուսաբանութիւններ: Նկատողութիւնները բոլորը առնուած են լուսաբանութիւններից:

Թարգմանիչ:

2 Մարտի 1909 թ.

Սոկրատեսի պաշտպանողական նաոբ.

Ի Արդեօք ինչ տպաւորութիւն էք ստացել ինձ մեղադրողներէից, ո՞վ աթէնացիներ, չգիտեմ, նոյնիսկ քիչ մնաց նրանց խօսքերէից մոլորութիւ, այնպէս համոզեցուցիչ էին խօսում, թէ և ճիշտն ասած, ոչինչ ճշմարիտ բան չասացին։ Նոցա բոլոր ստերից մի բան ինձ աւելի զարմացրեց. այդ այն է, որ նոքա զգուշացնումէին ձեզ, չլինի թէ իմ՝ ճառից խաբուիք. իբր թէ ևս ճարպիկ խօսող եմ, իսկ երբ ևս վաստերով ապացուցանեմ, որ ճարպիկ խօսող չեմ՝ և նոքա չամաչեն, այդ, ինձ թումէ, նոցա կողմից ամենամեծ անսովորութիւնը կլինի։ Եթէ ճշմարտութիւն ասողին նոքա ճարպիկ խօսող են ասում, ապա ես հոգեոր եմ, սակայն ոչ նոցա նման հոգեոր։ Սորա, ինչպէս ասում եմ, ոչ մի ճշմարիտ բան չասացին, իսկ ինձանից կլսէք ամբողջ ճշմարտութիւնը. երգւում եմ Զևսով, ո՞վ աթէնացիներ, որ դուք ինձանից ոճով ու դարուձացքներով զարդարուած ճառ չէք լսի, ինչպէս էին նոցա ճառերը, այլ պարզ, առաջին պատահած բաներից կազմուած ճառ կլսէք, որովհետև հաւատացած եմ, որ իմ՝ ասածը ճշմարտութիւն է և թող ձեզանից ոչ ոք ուրիշ բան էլ չսպասի։ Այլ և վայել չէ երբէք, ո՞վ քաղաքացիներ, որ ես այս հասակում, իբրև երիտասարդ կսկուած խօսքերով ձեր առաջ դուրս դամ։ Մի բան միայն շատ եմ խնդրում, ո՞վ աթէնացիներ, չզարմանաք և ողմուկ չհանէք, երբ լսէք, որ ես այն խօսքերով եմ պաշտպանւում, որոնցով սովորութիւն ունեմ՝ չուկայում և սեղանաւորների առաջ և ուրիշ տեղ խօսել, որտեղ ձեզանից շատերը ինձ լսել են։ Բանն այնպէս է. Արդէն եօթանասուն տարուց անց լինելով առաջին անգամ եմ դալիս դատարան և բոլորովին անժանօթ եմ՝ այստեղի խօսակցութեան ոճին. ինչպէս որ, եթէ իսկապէս իբրև օտարական հանդիպէի, անկասկած կներէիք ինձ, եթէ այն լեզուով և եղանակով խօսէի, որոնց մէջ ես սնուել եմ. այնպէս և այժմ՝ իրաւունք եմ համարում ձեզանից

խնդրելու, թող տալ իմ խօսակցութեան ձեռք, վատ է թէ լաւ այդ մի կողմը, ուշք դարձրէք միայն, արդեօք ճշմարիտ եմ խօսում թէ ոչ, գատաւօրի արժանիքը հէնց այդ է, իսկ հռետորինը՝ ճշմարտութիւնը ասել:

II նախ, ո՞վ ամենացիներ, իրաւացի եմ համարում պաշտպանուել առաջին զրպարտողների և զրպարտութիւնների դէմ, իսկ յետոյ վերջին զրպարտողների և զրպարտութիւնների դէմ: Արդէն շատ տարիներ առաջ շատերը ինձ ձեռք տալով մեղադրել են և ոչ մի ճշմարիտ բան չեն ասել, որոնցից աւելի եմ վախենում, քան Անխտոսից և իւրայիններից, թէ և սօքրատ էլ երկիւղալի են, բայց նօքրա աւելի երկիւղալի են: Ո՞վ քաղաքացիներ, նօքրա դեռուս ձեր մանուկ հասակում գրաւելով համոզումէին ձեզ և մեղադրում ինձ, ասելով, որ մի Սոկրատէս կայ իմաստուն, երկնքի երևոյթները քննող և երկրի տակինը հետազօտող և անարդար գործը արդար ներկայացնող (կամ թէ վատ խօսքը լաւ դարձնող. τὸν ἥττω λόγον ἡλείττω πρῶτον): Դեքա, ո՞վ ամենացիներ, որոնք տարածել են այդ լուրը, դօքա են իմ երկիւղալի մեղադրողները, որովհետեւ լսողները կարծում եմ որ այդ բաները հետազօտողը աստուածներին չի հաւատում, բացի այդ մեղադրողները շատ են և վաղուց է մեղադրում են:

Նօքրա ձեր այն հասակումն են խօսել, երբ ձեզանից ոմանք տղաներ էին, մի քանիսն էլ երիտասարդներ և աւելի հեշտ կարողէիք հաւատալ, այն էլ իմ բացակայութեան ժամանակ են մեղադրել, երբ ոչ ոք չէր կարող պաշտպանել: Ամենից դժուարն այն է, որ նոցա անունները չգիտեմ և չեմ կարող ասել, բացի մի կատակերգակից*), որը պատահաբար յայտնի է: Իսկ նօքրա, որոնք նախանձից և չարութիւնից դրդուած ձեզ համոզել են և նօքրա, որոնք համոզուելով իրենց կողմից ուրիշին են համոզել, դօքա բոլորը ամենաանմեղաբաններն են, որովհետեւ նոցա գատաւան կանչել զի կարելի և ոչ էլ կարելի է նոցա

*) Արիստոփանէս «Ամպէք» կատակերգութեան մէջ Սոկրատէսին ներկայացնում է իւրեւ սուփեստ:

դէմ խօսել, այլք պէտք է ինչպէս ստուերամարտ պաշտպանուել և հերքել, երբ ոչ ոք քեզ չի պատասխանում: Ընդունեցէք ուրեմն և դուք, ինչպէս ասում եմ, որ ինձ մեղադրողները երկու տեսակ են՝ այժմ՝ մեղադրողներ և առաջ՝ մեղադրողներ, որոնց մասին ասացի և համաձայնեցէք, որ պէտք է առաջ նոցա դէմ պաշտպանուել, որովհետեւ հէնց ինքներդ առաջ նոցա էք լսել ինձ մեղադրելիս և աւելի յաճախ, քան վերջիններին: Ուրեմն, ո՞վ ամէնացիներ, պէտք է պաշտպանուել և այսքան կարճ ժամանակում՝ արմատախիլ անել ձեր միջից այն թիւը կարծիքը, որ այնքան երկար ժամանակում՝ կազմել էք: Ես կցանկանայի կարողանալ այդ անել, եթէ իմ պաշտպանութիւնը ձեզ և աւելի շատ ինձ օգուտ կտար, բայց կարծում եմ՝ այդ դժուարէ և բոլորովին ծածուկ չէ ինձանից, ինչպիսի ձեռնարկութիւն է այդ: Այնուամենայնիւ թող այնպէս լինի, ինչպէս ասածուն հաճելի է. սակայն պէտք է օրէնքին հնազանդուել և պաշտպանուել:

III Սկսենք ուրեմն սկզբից, այն մեղադրականից, որից ծագել է իմ մասին այդ զրպատութիւնը, որին հաւատարով Մելէտոսը գրել է իմ դէմ՝ այն մեղադրականը: Լաւ, ինչ էին ասում իրենց մեղադրանքներով զրպարտողները: Դորա համար պէտքէ նոցա, իբրեւ մեղադրողների իսկական զանգատը մէջ բերել. Սոկրատէսը անարդարէ վարում, աւելորդ բաներով է զբաղում ուսումնասիրելով երկրի տակ եւ երկնի երեսին եղածները. անարդար գործը արդարէ ներկայացնում եւ ուրիշներին նոյն բանն է սովորեցնում. մօտաւորապէս այսպիսի բովանդակութիւն ունի: Դուք ինքներդ նման բան լսել էք Արիստոփանէսի կատակերգութիւնից, որտեղ մի Սոկրատէս ճօճում է ասումէ, որ ինքը օգուտ ճանապարհորդումէ և ուրիշ ամեն տեսակ յիմարութիւններ, որոնց մասին ես գաղափար էլ չունեմ, ես չեմ արհամարհում այդ գիտութեամբ զբաղուողին, ես չէի ցանկանայ, որ Մելիտոսը ինձ վրայ այդպիսի ծանր մեղադրանք դնէր: Ո՞վ ամէնացիներ, ես ոչ մի գաղափար չունեմ՝ այդ բաների մասին, այս բանին վրայ կարող եմ

բերել ձեզանից շատերին: Յանկալի էր, որ ձեզանից նրանք, որոնք լսել են իմ խօսակցութիւնները, իսկ այդպիսիներ շատ կան ձեր մէջ, միմեանց հարցնէին և ասէին: Հարցրէք միմեանց, արդեօք երբ և իցէ ձեզանից մէկը լսել է ինձ այդ առարկաների մասին խօսելիս: Այս համեմատութեամբ իմացէք և մնացեալ ամբողջ մեղադրականի ճշմարտութեան մասին, այն մեղադրականի, որ բարդում են ինձ վրայ:

IV Սակայն այդ ամենից և ոչ մէկը գոյութիւն չունի. այն էլ սուտէ, իբր թէ մէկից լսել էք, որ ես մարդկանց փողով եմ սովորեցնում^{*)} թէ և այդ, ինձ թւում է, որ լաւ է, եթէ միայն մարդ իրեն կարող է համարում սովորեցնել մարդկանց, ինչպէս Գորգիաս Լէօնտացին, Պրօգրիօս Կէօսացին և Նիպպիաս Էլիասցին^{**)}: Սոցանից իւրաքանչիւրը գնալով որեւէ քաղաք այն երիտասարդներին, որոնք ձրիաբար օգտւում են իրենց համաքաղաքացիների խրատներից, համոզում են համաքաղաքացիների հետ ունեցած յարաբերութիւնը թողնել և իրենց մօտ սովորել և դարձ համար ոչ միայն փող տալ այլ և շնորհակալութիւն յայտնել: Այստեղ մի իմաստուն մարդ էլ կայ Պարոսից (կղզի է), որի այստեղ գալու մասին լսեցի. պատահեցի ես մի մարդու, որը մենակ սովեեստներին աւելի փող է տուել քան մնացեալ բոլոր մարդիկ միասին, դա Կալլիասն է Հիպպոնիկի որդին: Սա երկու որդի ունի. որան հարցնում եմ.—Ո՞վ Կալլիաս, էթէ քո որդիները ծնուէին կամ իբրեւ քուսակներ կամ հորթեր, պէտք է ձիաւորներից կամ երկրագործներից ուսուցիչ վարձէիր, որ նրանց իրենց պարտականութիւնների համար կատարեալ և գեղեցիկ դարձնէր (χαλῶτε ἀγαθῶ)***). Բայց նոքա մարդիկ են. ո՞ւմ ես մտադիր նոցա համար ուսուցիչ հրաւիրել, որը կարողանար նրանց սովորեցնել իսկական

*) Արիտոսֆանէսը այս մասին յիշում է «Ամպերում»․ Քսէնոֆոնը իւր «Յիշողութիւններ»-ի մէջ հակառակն է պնդում:

**) Երեքն էլ ե. դարու ն. ք. Ք նշանաւոր սովեեստներ են:

***) Յոյների բարոյական բարձրութեան դադափարն է:

մարդու և քաղաքացու պարտականութիւնները, կարծում եմ, որ որդիներ ունենալուդ պատճառով այդ մասին մտածել ես. կայ մէկը թէ չէ.—Իհարկէ կայ, ասաց նա.—Ո՞վ է, հարցրի, որտեղացի է և որքանով է սովորեցնում.—Եւ նոս Պարոտացին է, *) ո՞վ Սոկրատէս, ասաց նա. հինգ մնասով է **) սովորեցնում: Երանի տուի Եւնոսին, եթէ յիշուի նա տիրապետում է այդ արուեստին և այդքան աժան է սովորեցնում: Ինքս ինձ կգովէի և կհպարտանայի, եթէ կարողանայի այդպէս սովորեցնել, սակայն ես, ո՞վ ամէնացիներ, չեմ կարողանում:

V. Իրաւամբ ձեզանից մէկը կարող է հարցնել.—Քո գործն ինչ է, ո՞վ Սոկրատէս. որտեղից են ծագել քո դէմ եղած զրպարտութիւնները. չէ՞ որ, եթէ զբաղուած չլինէիր ուրիշների նման որ և է տեղ աւելորդ բաներով, քո մասին այդպիսի վատ համբաւ ոչ մի կերպ չէր տարածուիլ: Ուրեմն ասս մեզ, ինչո՞ւմն է բանը, որ քեզ յախուռն չբառապարտենք: Այդպէս խօսողը, թւում է ինձ, որ ճշմարիտ է ասում: Կաշխատեմ ցոյց տալ ձեզ իմ անուն ստանալու և իմ մասին վատ համբաւ տարածուելու պատճառը: Դէ լսեցէք, թէ և գիտեմ, որ ձեզանից միքանիսը կծիծաղեն, սակայն լաւ իմացեք, որ իսկական ճշմարտութիւնը պիտի ասեմ: Այդ անունը ստացայ ոչ մի այլ պատճառով, բայց մի ինչ որ իմաստութեան համար: Իսկ այդ ինչ իմաստութիւն է. այդ մարդկային իմաստութիւնն է, որը, կարծում եմ, ունիմ: Նոքա, որոնց մասին մի քիչ առաջ խօսում էի, մարդկային փիլիսոփայութիւնից աւելի բարձր փիլիսոփայութեան տէր են կարծում իրենց, ուրիշ կերպ չգիտեմ ինչպէս անուանեմ նրանց: Ես այդ փիլիսոփայութիւնը չգիտեմ, իսկ ո՞վ ասում է իմ մասին ստում է և ինձ մեղադրելու նպատակով է ասում: Ո՞վ ամէնացիներ, խնդրեմ չաղմկէք և չկարծեք, թէ ինքս ինձ գովում

*) Յոյանի սովիեստ, սովորեցնում էր հռետորութիւն. ունի էլէգեաներ գրած:

**) Մնատը մօտ 24 մանէթ է. Գորգիասը վերցնում էր 1000 մնատ:

եմ, որովհետեւ ես իմ խօսքը չեմ մէջ բերելու, այլ նրանք, որին աւելի էի յարգում: Իմ իմաստութեան վկայ կրեմ, եթէ միայն ունիմ այդ իմաստութիւնը, Դէլֆիսում գտնուող աստծուն, Խայրէֆօնտին ճանաչումէք ի հարկէ, սա իմ ընկերն էր, երկուստարգութիւնից սկսած և ձեր ընկերը, ժողովրդական կուսակցութեան մէջ: Ձեզ հետ միասին փախաւ և ձեզ հետ էլ վերադարձաւ, յայտնի փախուստին: Լաւ գիտէք ինչպիսին էր Խայրէֆօնտը. որքան տաք էր իր ձգտումների մէջ դէպի ինչ էլ լինէր: Մի անգամ գնալով Դէլֆիս համարձակուեց հարցնել—ասացի մի ազմկէք, ո՞վ մարդիկ—թէ արդեօք ինձանից աւելի իմաստունը կայ: Պիւթեան պատասխանեց, որ աւելի իմաստունը չկայ: Այդ մասին կարող է վկայել նրա եղբայրը, որովհետեւ ինքը մեռել է:

VI. Այժմ ուշք դարձրէք, թէ ինչո՞ւ համար իմ այս ասում: Սորանով ցանկանում եմ բացատրել ձեզ, թէ ռոտեղից է ծագել այդ զրպարտութիւնը: Այդ պատգամը լսելով սկսիցի մտածել այսպէս. արդեօք ինչ է ասում սապուած և ինչ է այդ հանելուկը: Ես ինձ ամենսին իմաստուն չեմ կարծել, այժմ ինձ ամենաիմաստունը համարելով, արդեօք ինչ է ուզում ասել: Անկասկած նա չի ստում, որովհետեւ այդ նրան անվայել է: Երկար ժամանակ չէի կարողանում բացատրել որա միտքը, վերջապէս այսպիսի մի քննութիւն սկսեցի: Իրենց իմաստուն կարծողներից մէկի մօտ գնացի, որ եթէ որեւէ տեղ պէտք է, թող հէնց այնտեղ բացատրեմ գուշակութիւնը և ցոյց տամ գուշակին, որ այն մարդը ինձանից աւելի իմաստուն է, իսկ նա ինձ է համարում: Քննելով այն մարդուն, անունը ասելու կարիք չկայ, պետական մարդկանցից մէկն էր, այսպիսի մի տպաւորութիւն ստացայ, ո՞վ աթէնացիներ: Նրա հետ խօսելիս, ինձ թւում էր, որ նա իրեն մնացած բոլոր մարդկանցից ամենաիմաստունն է համարում, բայց իսկապէս չէր: Երբ ես փորձեցի նրան ապացուցանել, որ նրան թւում է, բայց իսկապէս չէ, հէնց այդ ժամանակից նրան և ներկայ եղողներից շատերին տեսլի դարձայ: Հեռանալով, ինքս ինձ

մտածեցի, որ ես այդ մարդուց աւելի իմաստուն եմ. որովհետեւ կարծում եմ, որ մեզանից և ոչ մէկը ամենագեղեցիկ բանը չգիտէր, բայց նա չգիտնալով հանդերձ, կարծում էր, թէ գիտէ, իսկ ես քանի որ չգիտեմ, չեմ էլ կարծում, թէ գիտեմ: Ինձ թւում է, որ ես իսկապէս նրանից մի փոքր աւելի իմաստուն եմ, որովհետեւ այն, ինչ որ չգիտեմ չեմ էլ կարծում, թէ գիտեմ: Այնտեղից գնացի իրենց իմաստուն համարողներից մի ուրիշի մօտ և նայն եզրակացութեանը եկայ հէնց այդ ժամանակից և նրան ևշատ ուրնշներին տտելի դարձայ:

VII. Սրանից յետոյ սկսեցի կարգով ման գալ. նկատում էի, որ տխուր եմ, և վախենում եմ. որովհետեւ ուրիշներին տտելի եմ դառնում, այնուամենայնիւ կարծում էի, որ անհրաժեշտ է աստծու ասածը ամենից բարձր դասել: Ուրեմն, որպէս զի հասկանայի և քննէի, թէ ինչ է ասում գուշակը, պէտք է գնայի նրանց մօտ, որոնք կարծում էին թէ մի բան գիտեն: Շունը վկայ*), ով աթէնացիներ, որ ձեզ ճշմարտութիւնը կասեմ: Աստծու ասածի համաձայն մի այսպիսի տպաւորութիւն ստացայ, որ նրանք, որոնք մեկ անուան տէր են, համարեմ ամենաուղորմելիներն են, իսկ նրանք որոնք ամենաարհամարհուածներն են առողջ մտածողութեան կողմից ամենաընդունակներն են: Ձեզ պէտք է ցոյց տամ իմ ճանապարհորդութեան ժամանակ կրած գծաւորութիւնները և այս բոլորը նրա համար, որ գուշակութեան անհերքելի լինելը երևայ: Պետական մարդկանցից յետոյ գնացի բանաստեղծների, ողբերգուների, քնարերգուների և ուրիշների մօտ: Տեղն ու տեղը ցոյց տալու համար, որ ես նրանցից աւելի տգէտ եմ, վերցնելով նրանց բանաստեղծութիւններից աւելի մշակուած համարուածները հարցնում էի, ինչ են ասում արդեօք այդ գրուածքներով, որ նրանցից միաժամանակ մի բան սովորեմ: Ամաչում եմ, ով մարդիկ, ճշմարտութիւնը ասել, այնուամենայնիւ պէտքէ ասել, ճիշտն ասած, բոլոր ներկայ եղողները նրանցից աւելի լաւէին բացատրում

*) Երգման ձև է:

նրանց գրուածքները Այդ կարճ ժամանակում իմացայ, որ բանաստեղծները ոչ թէ խեղճով, այլ մի բնածին զգացմունքով, ոգևորութիւննով են մի բան անում, ինչպէս պատգամախօսները և գուշակները, որովհետեւ սօքրատէլ շատ լաւ բաներ են ասում, բայց չեն հասկանում, ինչ որ ասում են: Ինձ թուաց, որ բանաստեղծները մի այդպիսի ոգևորութիւնով են բռնուած, միևնոյն ժամանակ իմացայ, որ նրանք կարծում են որ բանաստեղծ լինելով միւս մարդկանցից աւելի իմաստուն են, թէև իսկապէս չեն: Այսպիսով նրանց մօտից հեռացայ այն կարծիքը կազմելով, որ ես նրանցից բարձր եմ՝ այն բանով, ինչով և պետական մարդկանցից:

VIII. Վերջապէս գնացի արհեստաւորների մօտ: Իսկապէս ասած այդ տեսակէտից ոչինչ չգիտիմ՝ և կարծում էի, որ դոնէ դրանք շատ բաներ կ'իմանան: Իսկապէս ես չխաբուեցի. նրանք գիտէին այն, ինչ որ ես չգիտէի և այդ կողմից ինձանից աւելի իմաստուն էին: Սակայն, իմ աթէնացիներ, երևաց որ նրանք նոյն պակասութիւններն ունին, ինչ որ բանաստեղծները, որովհետեւ նրանցից ամեն մէկը իւր արհեստը լաւ իմանալով կարծում է, որ մնացած միւս մեծ գործերում էլ ամենից իմաստունն է և հէնց այդ սխալը նսեմացնում է նրանց ունեցած իմաստութիւնը. այնպէս որ ինքս ինձ հարցնում եմ՝ յօգուտ պատգամի, գերադասեմ արդեօք այն, ինչպէս կամ, այնպէս էլ մնան չլինելով ոչ նրանց իմաստութիւնով իմաստուն և ոչ էլ նրանց տգիտութիւնով՝ տգէտ, թէ՛ նրանց նման երկուսն էլ ունենամ: Ինձ և պատգամին պատասխանեցի, աւելի օգտակար է ինչպէս որ կամ, այնպէս էլ մնամ:

IX. Այդ քննութեան պատճառով, իմ աթէնացիներ, իմ դէմ ծագեցին շատ տտելութիւններ բաւական ծանր և դժուարին. այնպէս որ դրանից շատ մեղադրանքներ առաջացան, ինձ էլ սկսեցին անուանել իմաստուն, որովհետեւ ամեն անգամ, երբ որ և է մեկին մերկացնումէի իւր տգետութեան մէջ, ներկայ եղողները կարծում էին, որ ես այդ բանում իմաստուն եմ: Սակայն իսկապէս երևաց, որ

միայն աստուած է իմաստուն, պատգամն էլ հէնց այն է ասում, որ մարդկային իմաստութիւնը չնչին է և համարեան անարժէք, Ըստ երևոյթին նա այս դէպքում ինկատի չունի Սոկրատէսին, այլ իմ անունը իբրեւ օրինակ է վերցնում, ինչպէս որ եթէ մեկը ասէր, ո՞վ մարդիկ, ձեզանից նա է ամենաիմաստունը, ո՞վ որ Սոկրատէսի նման հասկացել է, որ իսկապէս իւր իմաստութիւնը ոչ մի արժէք չունի: Այժմ էլ ես շարունակում եմ ասածու ասածի նման քննել և քաղաքացիներին և օտարներին, յուսալով գուցէ մէկը լինի իմաստուն և երբ ինձ հակառակն է թուում, աշխատում եմ՝ յօգուտ ասածու ասածի ցոյց տալ, որ այդ մարդը իմաստուն չէ: Այդ գործով զբաղուելով ժամանակ չունեցայ ոչ քաղաքային և ոչ էլ տնային արժանայիշաակ բան անել, ասածուն ծառայելու պատճառով այժմ չբաւորութեան մէջ եմ:

Ն. Բացի այդ, այն երիտասարդները, որոնք ամենահարուստների որդիներն էին և ազատ ժամանակ ունէին, ինքնաբերաբար ինձ հետեւելով զուարճանում էին, երբ տեսնում էին, թէ ինչպէս մարդկանց քննում եմ: Իրենք էլ շատ անգամ ինձ նմանելով ուրիշներին էին քննում: Կարծում եմ, որ նրանք էլ գտնում էին բազմաթիւ մարդկանց, որոնք կարծում են թէ մի բան գիտեն, բայց համարեան ոչինչ չգիտեն: Այդ պատճառով նրանցից քննուածները ինձ վրայ էին զայրանում և ոչ նրանց, ասում են, որ Սոկրատէսը ամենաանպէտք մարդն է և երիտասարդներին փչացնում է: Բայց եթէ մէկը հարցնէ—ի՞նչ անելով և ի՞նչ սովորեցնելով, ոչինչ չեն կարող ասել և որպէսզի չերկայ թէ ծուղակի մէջ են ընկել, ասում են այն, ինչ որ կարելի է ամեն մի փիլիսոփայութեամբ զբաղուողի մասին ասել. — Նա (Սոկրատէսը) զբաղում է երկնային մարմիններով և երկրի ներսը քննելով, աստուածներին չի հաւատում, անարդար գործը արդարէ դարձնում: Ծշմարիտն ասել նրանք, կարծեմ, չեն ուզում, աշխատում են ցոյց տալ, որ մի բան գիտեն, մինչդեռ ոչինչ չգիտեն: Այդ տեսակ մարդիկ շատ պատուախնդիր, տաք բնաւորութեան

տէր են, գոցա թիւն էլ շատ է և բոլորն էլ իմ մասին միտ-
քան և համաձայն են վկայում ուստի նրանք շատ վաղուց
ձեր ականջում հայել են այդ ամենը ինձ ամբաստանելով:
Դրանցից են իմ դէմ ելել՝ Մելէտոսը, Անխտոսը և Լիկոնը,
Մելէտոսը բանաստեղծների, Անխտոսը արհեստաւորների
և քաղաքային գործով զբաղուողների, Լիկոնը հռիտորների
կողմից: Այնպէս որ սկսելով խօսել, զարմանում եմ, թէ
արդեօք կարող կլինեմ ձեր միջից արմատախիլ անել այն
ամբաստանութիւնը, որը, այնքան կարճ ժամանակում այդ-
քան մեծացել է: Ահա ձեզ ճշմարտութիւնը, ով ամենա-
ցիններ, առանց թաքցնելու ոչ արժէքաւոր և ոչ էլ անարժէք
որեւէ բան: Փետիմ, որ հէնց այս պատճառով ատելի եմ
դառնալու, դրան ապացոյց կարող է լինել այն, որ ես
ճշմարտութիւնն եմ առում, որ այդ է իմ դէմ եղած մե-
ղադրանքը և պատճառներն էլ այդ են. երբ էլ քննելու
լինէք, այժմ թէ յետոյ, միշտ կգտնէք, որ այդ այսպէս է:

XI. Իմ առաջին մեղադրողների մեղադրանքների դէմ
այս էլ բաւական է ձեր առաջ պաշտպանուելու համար: Ինչ
վերաբերում է բարի և հայրենասէր Մելէտին, ինչպէս
ինքն իրեն անուանում է և միւս վերջիներին, կաշխատեմ
այժմ պաշտպանուել: Ինչպէս այլ մեղադրողներ, կրկին
վերցնենք նրանց մեղադրականը, մօտաւորապէս այսպէս
են առում. Սոկրատէսը մեղաւորէ երիտասարդներին փշա-
ցելու գործում, այն ասուածներին, որոնց քաղաքը հա-
ւատում է նա, չի հաւատում, այլ ուրիշ նօր ոգիներ է ընդո-
նում: Մեղադրականը այս է. քննենք մեղադրանքի իւրա-
քանչիւր կէտը առանձին: Նախ առում է որ ես մեղաւո-
րեմ երիտասարդներին փշացնելու գործում: Իսկ ես ա-
սում եմ, ով ամենացիններ, մեղաւոր է ինքը Մելէտը, որ
լուրջ գործերին կատակով է վերաբերում, մարդկանց
թեթեամտօրէն դատի կանչելով, ցոյց տալու համար, թէ
ինքը զբաղւում է և հօգ է տանում այնպիսի գործերի
մասին, օրոնցից և ոչ մէկը նրա ուշադրութեան առարկայ
չի եղել. իսկ թէ բանը այսպէս է, կաշխատեմ ձեզ ցոյց
տալ:

XII.—Դէ մօտեցիր, ո՞վ Մեկէտ և ասա-ուզիդ չէ՞, որ քեզ համար մեծ կարեւորութիւն ունի երիտասարդներին հնար եղածին չափ կատարեալ դարձնելու գործը։

— Իհարկ է։

— Առանձին սրանց, ո՞վ է նրանց առաքինի դարձնում։ Պարզ է որ գիտես, որովհետեւ այդ մասին հոգում ես, փչացնողին գիտես, ինչպէս ասում ես ինձ ես ներկայացնում ու մեղադրում։ Ապա առաքինի դարձնող բեր, ցոյց տուր ո՞վ է։ Տեսնում ես Մեկէտ, որ լռում ես և ոչինչ չես պատասխանում։ Մի՞թէ քեզ համար ամօթ չէ և զօրեղ փաստ չէ, որ երբէք այդ մասին չես մտածել, ինչպէս ասում էի։ Սակայն ասան, բարեկամ, ո՞վ է նրանց առաքինի դարձնում։

— Օրէնքները։

— Բայց այդ չեմ հարցնում, պատուելի, այլ այն թէ քոն է այն մարդը, որը ինքը նախ գիտէ այդ օրէնքները։

— Սոքա, ո՞վ Սոկրատէս, դատաւորները։

— Ինչպէս ասացիր, ո՞վ Մեկէտ, սոքա կարող են կրթել երիտասարդներին և առաքինի դարձնել։

— Այո, իհարկէ։

— Այդեօք բոլորը, թէ միայն մի քանիսը։

— Բոլորը։

— Երգում եմ ներկայով, որ լաւ ես ասում և ցոյց ես տալիս մեծ բազմութիւն օգուտ տուողներին։ Ինչպէս ուրեմն, այս լսողներն էլ առաքինիացնում են թէ ոչ։

— Դոքա էլ։

— Իսկ խորհրդի *) անդամները ինչպէս։

— Եւ խորհրդի անդամները։

— Սակայն, ո՞վ Մեկէտ, մի՞թէ Ժողովին **) յաճախողները չեն փչացնում երիտասարդներին, թէ նրանք էլ են առաքինիացնում։

— Նոքա էլ։

*) 500-ի խորհրդի մասին է խօսքը։

**) Ժողովրդական Ժողով։ որին մասնակցում էին 20 տարեկանից վեր եղողները։

— Ինչպէս երևում է բոլոր տխնացիները առաքինի են դարձնում և միայն ես իմ փչացնում. այսպէս ես ասում:

— Դորանից էլ աւելին եմ ասում:

— Ինձ դու մեծ յանցանք ես վերագրում. սակայն պատասխանիր, ձերի մասին ինչպէս ես մտածում, նրանց բոլոր մարդիկ ազնուացնում են և մէկն է փչացնում, թէ հակառակը մէկը, իսկ շատ քչերը՝ ձիաւորները, կարող են ազնուացնել, իսկ մնացածները երբ սիրում են հոգ տանել և գործածել փչացնում են: Նոյն բանը չի պատահում, ո՞վ Մելէտ, ձերի և միւս կենդանիների հետ, Անկասկած այդպէս է. կհաստատես դու Անխտախ հետ թէ ոչ, միւսն ո՞չ է: Մեծ երջանկութիւն կլինէր երիտասարդների համար, եթէ ես միայն փչացնէի, իսկ մնացածները նրանց առաքինիացնէին: Սակայն բաւական պարզ ցոյց տուիր, ո՞վ Մելէտ, որ երիտասարդների մասին հոգ չես տարել և յայտնի դարձրիր քո անհոգութիւնը, որ դու երբէք չես հոգացել այն մասին, ինչի համար ինձ դատի ես կանչել:

VIII. Յանուն Ձեռի, ո՞վ Մելէտ, ասա, արդեօք օգտակար քաղաքացիների մէջ ապրելն է լաւ թէ վնասակար: Դէ, պատասխանիր: Ձէ որ գժուար բան չեմ հարցնում: Միթէ վնասակարները միշտ իրենց մօտ եղողներին վնասակար, իսկ բարիները օգտակար բան չեն անում:

— Իհարկէ:

— Ուրեմն կոյ մէկը, որը ցանկանար իւր մօտ եղողներից աւելի վնաս կրէր, քան օգուտ: Պատասխանիր բարեկամ, Ձէ որ օրէնքն էլ հրամայում է պատասխանել: Կոյ մէկը, որ ցանկանար վնաս կրել:

— Իհարկէ ոչ:

— Լաւ. ուրեմն ինչ դատի ես հրաւիրել ինձ, իբրեւ կամա՞ռ թէ ակամայ երիտասարդներին փչացնող և վնասող:

— Իհարկէ կամաւոր:

— Ի՞նչպէս, Մելէտ, դու քո այդ հասակովդ ինձանից, այսպիսի հասակաւորիցս, այնքան իմաստուն գտնուեցար, որ գիտես, թէ վատերը միշտ վնաս են բերում իրենց

մօտ եղողներին, իսկ լաւերը օգուտ, իսկ ես այնքան յիմարացայ, որ այնքանն էլ չգիտեմ, թէ երբ մօտ եղողներինցս մէկին փչացնում եմ, պէտք է վախենալ, որ նրանից կարող եմ փնաս ստանալ, այնպէս որ մի այդպիսի չարիք, քս ասելով, կամաւոր եմ անում: Քս այդ խօսքին չեմ հաւատում: Ե կարծում եմ մարդկանցից ոչ ոք էլ չի հաւատալ: Բայց կամ չեմ փչացնում կամ եթէ փչացնում եմ ակամայ, այնպէս որ երկու դէպքումն էլ ստում ես: Իսկ եթէ ակամայ եմ փչացնում այդպիսիներին, ակամայ մեղաւորներին, օրէնքը չի պահանջում դատի մատնել, այլ առանձին սովորցնել, հասկացնել: Պարզ է որ երբ հասկանում, կվերջացնեմ այն, ինչ որ ակամայ էի անում: Իսկ ինձ մօտենալուց և հասկացնելուց խոյս էիր տալիս և չէիր սեղում, այժմ բերել ես այստեղ, որտեղ օրէնքի համաձայն ոչ թէ խրատուելու, այլ պատժի կարիք ունեցողներին են բերում:

XIV. Այժմ, ով աթէնացիներ, պարզ է, որ Մելէտը, երբէք հոգ չի տարել, ինչպէս ասում էի, այդ բաների համար: Սակայն ասան, ով Միլէտ, ինչպէս եմ փչացնում երիտասարդներին. պարզ է, որ քո գրածի համաձայն, սովորեցնում եմ չհաւատալ այն աստուածներին, որոնց քաղաքն է հաւատում, այլ նոր ոգիների հաւատալ, այդ սովորեցնելով չեմ փչացնում քս ասելով:

— Հէնց այդ է:

— Յանուն այն աստուածների, որոնց մասին է այժմ խօսքը, ասան էլ աւելի պարզ, և ինձ և այս մարդկանց, որովհետեւ չեմ կարողանում հասկանալ արդեօք մեղադրում ես ինձ այն բանում որ սովորեցնում եմ, թէ մի քանի աստուածներ կան, ինքս էլ հաւատում եմ, ուրեմն և բոլորովին անաստուած չեմ, հետեապէս այդ բանում էլ մեղաւոր չեմ: Թէ միայն նրանց չեմ հաւատում, որոնց քաղաքն է հաւատում, այլ ուրիշներին և այս բանում եմ մեղաւոր, որ ուրիշներին եմ հաւատում և նոյն բանը ուրիշներին եմ սովորեցնում:

— Այդ եմ ասում, որ ամենեւին աստուածներին չեմ հաւատում:

— Ո՞վ զարմանալի Մեղէտ, այդ ինչ ես ասում։ Ուրեմն ոչ արեւին, ոչ լուսնին չեմ համարում աստուածներ, ինչպէս ուրիշները։

— Զեւը վկայ, որ ոչ, ո՞վ դատաւորներ, որովհետեւ ասում է, որ արեւը քարէ, իսկ լուսինը հող։

— Ուրեմն դու Անաքսագորին ես մեղադրում և ինչպէս այնքան ստում և կարծում ես, որ սոքա անտեղեակ են գիտութեան և չգիտեն, որ Անաքսագոր կլազոմենացու գրքերն են լի այդպիսի խօսքերով։ Կնշանակի այն երիտասարդները չեն ինձ մօտ սովորում այն, ինչոր ամենաշատը մի դրախմով կարող են թատրոնում սովորել և Սոկրատէսին ծաղրել, երբ նա ցոյց տայ, որ այն իրեն վարդապետութիւնն է, որը առանց այն էլ յիմարութիւն է։ Սակայն յանուն Զեւի, այնուամենայնիւ քո կարծիքով աստուածներին չեմ հաւատում։

— Զեւը վկայ, որ ամենեւին ոչ։

— Ո՞վ Միլէտ, ինձ թւում է որ դու էլ չես հաւատում այդ բանին։ Ո՞վ ակթենացիներ, կարծում եմ, որ այդ մեղադրականը շատ անպատկառ, յանդուգն և յախուռն է գրած և յանդուգնի ու խակի մէկն է գրել։ Կարծես թէ փորձելու համար հանելուկ է առաջարկում, արդեօք իմաստուն Սոկրատէսը կարո՞ղ է հասկանալ, որ ծաղրում եմ և ինքս ինձ հակասում, թէ կխաբեմ և նրան և լսողներին։ Իսկապէս նա ինքը իւր մեղադրականում իրեն հակասում է իբր թէ ասելիս լինի, Սոկրատէսը մեղաւոր է, որ աստուածներին չի հաւատում, բայց աստուածներին հաւատում է։ Այս, ի հարկ է, ծաղր է։

XV. Նայեցէք, ո՞վ մարդիկ, արդեօք նա այն է ասում, ինչ որ ինձ թւում է։ Դու, ո՞վ Մեղէտ, պատասխանիր մեզ, իսկ դուք, ինչպէս սկզբից արդէն խնդրել եմ, այժմ էլ յիշեցնում եմ, չազմկէք, երբ իմ սովորական ոճով խօսեմ։

— Կայ արդեօք մի մարդ, ո՞վ Մեղէտ, որը ընդունէր մարդկանց գործերի գոյութիւնը, իսկ երեսնց մարդկանց ոչ։ Թո՞ղ պատասխանի, ո՞վ մարդիկ, և ոչ թէ այս կամ այն վնթվնթայ։ Կայ մէկը, որ ձիերի գոյութիւնը ընդա-

նի, իսկ նրանց գործերը ոչ կամ սրինդ նուագողներին չընդունի, իսկ նրանց գործերը ընդունի։ Չկայ, ո՞վ մարդկանցից ամենալաւդ, թէ և չես ուզում պատասխանել։ Բայց ես քեզ և մնացածներին ասում եմ այդ։ Գոնէ սրան պատասխանիր, կոյ մէկը, որը ընդունի ոգիների գործերը, իսկ ոգիներին ոչ։

— Չկայ։

— Ի՞նչ մեծ ծառայութիւն արիր, որ հազիւ հազ պատասխանեցիր սրանցից ստիպուած։ Ուրեմն ասում ես, որ ընդունում ոգիների գործեր և սովորեցնում, լինին հին թէ նոր ոգիներ, յամենայն դէպս քո խօսքի համաձայն ընդունում եմ ոգիների գործեր և այս բանը հաստատել ես երգումով քո մեղադրականի մէջ։ Եթէ ընդունում եմ ոգիների գործերը, պէտք է և հակառակն ընդունեմ, այսինքն ոգիներին։ Այդպէս չէ. իհարկէ կարծում եմ, որ համաձայն ես, քանի որ չես պատասխանում։ Բայց չէ որ մենք ոգիներին ընդունում ենք կամ իբրեւ աստուածներ կամ իբրեւ աստուածների որդիներ։ Այո՞ թէ ոչ։

— Ի հարկէ այո։

Հետեւապէս ընդունում եմ ոգիներին, ինչպէս ասում ես, և որ ոգիները մի տեսակ աստուածներ են, ահա այդ է, որի համար ասումէի, թէ հանելուկով ես խօսում և ծաղրում, ասելով, որ աստուածներին չեմ հաւատում, բայց երևում է, որ հաւատում եմ, որովհետեւ ընդունում եմ ոգիներին։ Միւս կողմից եթէ ոգիները աստուածների, այսպէս ասած, մի տեսակ ապօրինի զաւակներն են նիւֆաներից կամ ուրիշներից ծնուած, ինչպէս առհասարակ կարծում են, մարդկանցից ո՞րը արդեօք ընդունում է աստուածների որդոց գոյութիւնը, իսկ աստուածներին ոչ։ Այս նոյնքան անտեղի է, որքան եթէ մէկը ընդունէր ձիերի և էջերի քուռակների գոյութիւնը, իսկ իրենց ձիերի և էջերի գոյութիւնը՝ ոչ։ Բայց դձու, Մեկտ, անկարելի է, որ այդ մեղադրականը գրած չլինես կամ մեզ փորձելու նպատակով կամ չիմանալով ինչ միղադրական դնես ինձ վրա։ Իսկ որպէսզի կարողանաս համոզել քիչ թէ շատ խելքը

գլխին մարդու, որ միննոյն ժամանակ մարդ կարող է ընդունել ոգիներին և աստուածների գործերը, իսկ ոգիներին, աստուածներին և հերոսներին՝ ոչ, այդ անկարելի է:

XVI. Այսպէս ուրեմն, ո՞վ աթէնացիներ, որ ես Մեկտի մեղադրականի համաձայն մեղաւոր չեմ, կարծեմ աւելի մեծ պաշտպանողականի կարիք չկայ, այլ այս է բաւական է. ինչ վերաբերում է իմ առաջուայ ասածին, որ իմ դէմ շատերի կողմից ատելութիւն է առաջացել. համոզուած եղէք, որ այդ ճշմարիտ է և եթէ սրիէ բան կարող է ինձ խորտակել հապա հէնց այդ հանգամանքն է, որ ինձ վտանգ է սպառնում: Ոչ Մեկտը, ոչ Անխտոսը, այլ շատերի կողմից եղած այդ մեղադրանքը և ատելութիւնը, որը և շատ ուրիշ բարի մարդկանց խորտակել է և կարծում եմ ես վերջինը չեմ լինի: Իրաւամբ մէկը կարող է հարցնել, միթէ ամօթ չէ, ո՞վ Սոկրատէս, որ այնպէսի ուսումն ես սովորեցրել, որը այժմ՝ քեզ մահէ սպառնում: Իրաւամբ կարող էի նրան պատասխանել, լաւ չեա ասում, բարեկամ, եթէ կարծում ես, որ ամենափոքր օգուտ անգամ՝ բերող գործի ժամանակ պէտքէ ինկատի ունենալ կեանքի և մահու վտանգը և ոչ այն, թէ արդեօք արդար թէ անարդար գործ է կատարում մարդ և բարի թէ չար մարդուն վայել: Քո խօսքով կնշանակէ այն կիսաստուածները և ուրիշները, որոնք Տրոյայում ընկան՝ վատեն, Թէտիսի որդին չխայտառակուելու համար այնքան արհամարհեց ամենամեծ վտանգն անգամ, որ երբ մայրը իբր աստուածուհի իմացաւ, որ ուղում է Հեկտորին սպանել, այսպիսի մի բան ասաց, որքան յիշում եմ—«Որդի, եթէ քո ընկեր Պատրոկլէսի մահուան վրէժը լուծես, ինքդ կմեռնես, որովհետեւ Հեկտորի անկումից յետոյ քոնը անխուսափելի է»*) Նա լսելով այդ արհամարհեց վտանգը և մահը աւելի շուտ վախենալով, որ ապրելով և ընկերով վրէժը չլուծելով աւելի վատ կլինի—«Թող իսկոյն մեռնեմ, որպէսզի կեռագլուխ նաւերում իբրև աւելորդ բեռ, ծիծաղի առարկայ չդառնամ: Կարծում ես նա մտածում էր այն ժամանակ, երբ մօտենում էր

*) Իլիական. երգ ԺԳ, տող 95 և չրկ.

մահուանը և վտանգին, Ահա թէ իսկապէս ինչպէս է լինում, թիւ ամենայնիւնք: Ինչ տեղ որ մէկը իրեն նշանակում է կարծելով, որ այդ ամենալաւն է, կամ արխոնտըն՝) է նրան նշանակում, կարծում եմ, պէտք է այնտեղ էլ մնայ վտանգի ենթարկուելով, ինկատի չունենայ խայտառակութիւն դէպքում, ոչ մահը և ոչ ուրիշ բան:

XVII. Շատ վատ վարուած կլինէի, թիւ ամենայնիւնք, եթէ մինչդեռ այն արխոնտները, որոնց դուք ընտրել էիք ինձ վրայ իշխելու, երբ ինձ նշանակում էին Պատիզ այսում կամ Ամֆիպոլիայում կամ Դէլփոսում մի տեղ այն ժամանակ մնում էի իմ տեղս և ինչպէս ուրիշները կեանքս վտանգի էի ենթարկում, իսկ այժմ, երբ աստուած է նշանակել, ինչպէս ըմբռնել եմ և հասկացել, որ իմ կեանքի ընթացքում փիլիսոփայութեամբ զբաղուեմ և քննեմ թէ ինձ և թէ ուրիշներին, այս դէպքում վախենամ կամ մահուան կամ այլ բանի վտանգից և թողնեմ տեղս: Իհարկէ այդ սարսափելի կլինէր և այն ժամանակ կարեւր էր ինձ իրաւամբ դատի ենթարկել, որ աստուածներին չեմ հատուում չընդունելով գոչակութիւնը, վախենում եմ մահուանից, կարծում եմ իմաստուն եմ, բայց չեմ Մահուանից վախեցողը ոչ այլ ինչ է, բայց եթէ կարծել, թիւ մարդիկ, որ իմաստուն ես, թէև չեմ, կնշանակէ կարծել, որ գիտեմ այն, ինչ որ չգիտեմ, որովհետև ոչ ոք չգիտէ ինչ է մահը: Գուցէ մարդկանց համար եղած բարիքներից ամենամեծն է, բայց այնու ամենայնիւ վախումն, իբր թէ չարիքներից ամենամեծն է, եւ մի թէ տգիտութիւն չէ, այն էլ ամենաամօթալի, որ կարծում են թէ գիտեն այն, ինչ որ չգիտեն: Այս դէպքում էլ, թիւ մարդիկ, իրաւամբ զերազմանցում եմ միւս բոլոր մարդկանցից և սրանով աւելի իմաստուն եմ երևում: Կարծում եմ, որ չգիտեմ ինչ կայ Հադէսում^{*)}, որովհետև անկարող եմ իմանալ: Իսկ ապօրինի վարուել և չենթարկուել ամենալաւին, լինի մարդ թէ աստուած, գիտեմ, որ վատ է և

*) Պետութեան ըստձր կառավարչական պաշտօնեայ:

**) Դժոխքը:

ամօթալի, ուստի չեմ փախչի և չեմ վախենայ այն բանից, որ չգիտեմ՝ քարիք է թէ ոչ աւելի քան այն շարիքից, որը յայտնի է թէ չարիք է։ Եթէ նոյն իսկ այժմ ինձ արձակէք չհաւատալով Անխտին, որը ասում է թէ կամ հենց սկզբից չպէտքէ այստեղ գայի, իսկ երբ եկել եմ չի կարելի ինձ մահուան չենթարկել, ասելով, որ ձեր օրգինները կսկսեն սովորել այն, ինչ որ Սոկրատէսն է սովորեցնում և բոլորովին կփչանան, եթէ, ասում եմ, ինձ ասէիք — Ո՛վ Սոկրատէս, այժմ մենք Անխտին չենք հաւատում, իսկ քեզ արձակում ենք սակայն այն պայմանով, որ երբէք ոչ այդ քննութեամբ և ոչ էլ փիլիսոփայութեամբ զբաղուես, երբ բռնուես այդ գործի մէջ, պէտքէ մահուան ենթարկուես, ինչպէս ասացի, եթէ այս պայմաններով արձակէք, կասեմ, որ ես ձեզ, ո՞վ աթէնացիներ, յարգում եմ և սիրում, իսկ աւելի ենթարկում եմ առածուն, քան ձեզ և քանի որ շնչում եմ և կարողեմ, չեմ գաղարի փիլիսոփայութեամբ զբաղուելուց, յորդորելուց և ապացուցանելուց, երբ պատահեմ ձեզանից ամեն մէկին ասելով իմ սովորութեան համաձայն — Ո՛վ մարդկանցից ամենալաւը, լինելով Աթէնքի գիւտութեամբ և զօրութեամբ մեծ ու փառաւոր քաղաքի քաղաքացի, չե՞ս ամաչում, որ հարստութեան, փառքի ու պատուի մասին աւելի ես մտածում, աշխատելով, որքան կարելի է շատ ունենալ, իսկ հոգու և ազատութեան կատարելութեան մասին չես էլ մտածում՝ հոգալ եթէ ձեզանից մեկը պատասխանէ և ասէ, որ հոգ է տանում, իսկոյն չեմ թողնի և հեռանայ, այլ կսկսեմ քննել, հարց ու փորձ անել, ցոյց տալ երբ երևայ, որ այդ առաքինութիւնը չունի, բայց ցոյց է տալիս, կնախատեմ, որ այն, ինչ որ աւելի արժէքաւոր է, նրանով ամենից քիչ է զբաղւում, իսկ անարժէք բաների վրայ աւելի է հոգ տանում։ Այսպէս կվարուեմ և երիտասարդի և ծերի հետ, որտեղ էլ պատահեմ և օտարի և քաղաքացու հետ, աւելի քաղաքացիների հետ, որոնք իրենց տեղի ծննդեամբ ինձ աւելի մօտ են։ Լաւ իմացէք, որ այսպէս հրամայում է աստուած և

կարծում եմ՝ ձեր քաղաքի համար աւելի մեծ բարիք չի եղել քաղաքում քան իմ ասածուն այս տեսակ ծառայելը, ես ոչ մի ուրիշ բանի բայց եթէ ձեզանից երկտասարդների և ծերերի մէջ այս համոզմունքը տարածելու համար եմ շրջում.— հոգա՛ նախ և առաջ, ոչ այնքան մարմնիդ և հարստութեանդ կամ այլ նման բանի համար, որքան հոգուդ, որ նրան կատարելագոյն դարձնես. ոչ թէ հարստութիւնից է ծագում առաքինութիւնը, այլ առաքինութիւնից՝ հարստութիւնը և մարդկանց մնացած միւս բարիքները եւ անհատական եւ ընդհանուր. եթէ այսպէս խօսելով երիտասարդներին փչացնում եմ, յիրաւի իմ խօսքերը վնասակարեն. իսկ եթէ մէկը ասի, որ ես ուրիշ եմ սովորեցնում և ոչ այդ, նա կսրտի։ Այսպէս ուրեմն, ո՞վ աթէնացիներ, կհաւատաք Անխտին թէ ոչ, ինձ կարծաւէք թէ ոչ, ես ուրիշ կերպ չեմ վարուի, եթէ նոյն իսկ շատ անգամ մահուան դատապարտուելու լինեմ։

XVIII. Մի աղմկէք, ո՞վ աթէնացիներ, յիշեցէք, որ խնդրել էի ձեզ չաղմկել, ինչի մասին էլ որ խօսեմ, այլ լսել, որովհետեւ կարծում եմ լսելով օգուտ կստանաք։ Ուզում եմ ձեզ հետ ուրիշ բաների մասին խօսել, որոնց համար երևի նորից կաղմկէք, բայց ամենեւին չանէք այդ։ Լաւ իմացէք, եթէ ինձ սպանէք այնպէս, ինչպէս այժմ, աւելի մեծ վնաս կհասցնէք ինքներդ ձեզ, քան ինձ։ Ինձ ոչ Անխտը, ոչ Մեկէտը չեն վնասել և չեն էլ կարող, որով հետեւ, կարծում եմ, ասածու պատուիրանին հակառակ կլինէր որ լաւ մարդը վատից վնասուէր։ Սակայն կարողէ սպանել կամ հալածել կամ վրեժ առնել և այս բոլորը ինչպէս սրանք, այնպէս և ուրիշները համարում են մեծ չարիքներ, իսկ ես ոչ։ Աւելի մեծ չարիք է այն, ինչ որ այժմ է կատարւում՝ մարդուն անարգարացի սպանելը։ Ո՞վ աթէնացիներ, կարող է մէկը կարծել, որ ես ինձ եմ պաշտպանում, բայց աւելի ձեզ եմ պաշտպանում, չլինի թէ ասածու կողմից եղած պարգևի դէմ մեղանչէք, ինձ մահուան դատապարտելով։ Եթէ ինձ սպանէք, չէք կարող մէկ ուրիշին հեշտութեամբ գտնել, որը ասածու կողմից

նշանակուէր ձեր քաղաքի համար, թէև համեմատութիւնը ծիծաղելի է,—որը (քաղաքը) նման պատճառով շատ ծոյլ է և շարժուելու համար մի խթանի պէտք ունի։ Կարծում եմ, որ աստուած ինձ, իբրև այդպիսի մէկին, նշանակել է քաղաքի համար, որ ամբողջ օրը ամեն տեղ չդադարեմ իւրաքանչիւրիդ համոզելուց, նախատելուց, գրգռելուց։ Այդպիսի մէկը, ով մարդիկ, շուտ չի ճարտի, եթէ հաւատար ինձ, կներէք։ Բայց դուք, իհարկէ զայրացած լինելով, ինչպէս իմ պատճառով յանկարծ վեր թռածներ, կհալածէք ինձ և հաւատարով Անխառնին, հեշտութեամբ կապանէք, եթէ միայն կարողանաք կեանքներիդ մնացած մասը քնած անցկացնել, եթէ միայն աստուած ուրիշին չնշանակի, որ ձեր մասին հոգայ։ Իսկ որ ես պատահամբ այնպիսի մէկն եմ, ինչպիսին աստուած քաղաքի համար պետի նշանակէր, եղբակացրէք այս բանից։ Մարդուն յատուկ չէ այն բանը, որ ես իմ բոլոր ունեցածների մասին հոգ չեմ տանում և հրաժարւում եմ անային հոգսերից և միշտ ձեր գործերն եմ անում, իւրաքանչիւրիդ առանձին մօտենալով իբրև հայր կամ մեծ եղբայր համոզելու, որ առաքինութեան մասին հոգ տանի։ Եթէ ես այդ բանից որ և է օգուտ ստանայի կամ ուժիկ և այդ նպատակով գործէի, էլի մի հիմք կունենայի։ Այժմ ինքներդ տեսնում էք, որ մեղադրողները նայն իսկ մնացած բոլորի մէջ առանց ամաչելու մեղադրում են, իսկ այս բանի մէջ, այն աստիճան անամօթութեան չեն հասել, որ կարողանային վկայ բերել, թէ երբ և իցէ մէկից ստացել կամ պահանջել եմ վարձ, իսկ որ ես ճշմարիտ եմ ասում, այդ բանին զօրեղ ապացոյց կարող է լինել, կարծում եմ, աղքատութիւնս։

XIX. Իսկապէս կարող է տարօրինակ թուալ, որ ես շրջելով առանձին առանձին խորհուրդ եմ տալիս և շատ էլ հոգում եմ, իսկ ընդհանուրի առաջ, ձեր ժողովում, չեմ համարձակւում ձեր քաղաքին խորհուրդ տալ։ Դրա պատճառը, որի մասին շատ տեղ և շատանգամ լռելէք, այն է, որ իմ մէջ հոգում է մի աստուածային ոգիական

ձայն, որի մասին Մելէտը իւր մեղադրականութեամբ ծաղրելով է յիշում: Այս ձայնը ծագել է իմ մէջ մանկութիւնից, երբ յայտնուում է, միշտ յետ է կանգնեցնում ինձ անելու այն, ինչ որ ուզում եմ և երբէք չի խախտւում. այդ ձայնն է, որ չի թողնում և ընդգիծմանում է պետական գործերով զբաղուելու. կարծում եմ, որ լաւ է անում, որ խանգարում է: Լաւ իմացէք, իմ աթէնացիներ, եթէ ես սկզբից սկսած լինէի զբաղուել պետական գործերով, վաղուց կորած կլինէի և ոչ ձեզ և ոչ ինչ օգուտ չէի կարող տալ: Զգայրանաք, որ ճշմարիտն եմ ասում. չկայ մի մարդ, որ կարողանար ձեզ կամ ժողովրդին հակառակելով, որ քաղաքում շատ ապօրինութիւն և անարդարութիւն չլինի, անվտանգ մնար: Եթէ մէկը ուզում է իսկապէս ազատութեան համար կռուել և մի առժամանակ ապահով մնալ պէտք է լինի մասնաւոր և ոչ հասարակական գործիչ:

XX. Ասածներին զօրեղ ապացոյցներ կբերեմ ոչ թէ խօսքեր, այլ այն, ինչ որ գնահատում էի՝ գործեր: Լսեցէք թէ ինչ պատահեց ինձ հետ, որ իմանաք թէ տեղիք չեմ տալի արդարացի գործում, մահուանից վախենալով և որ նոյն իսկ կարող չէի տեղի տալ թէ և ես ձեզ անախորժ և ձանձրալի, բայց ճշմարիտ բաներ եմ ասում: Ո՛վ աթէնացիներ, քաղաքում բացի ժողովի*) անդամութիւնից ուրիշ պաշտօն չեմ վարել: Մեր Անտիսթոսի ֆիլէն կռաւովում էր պատահմամբ պրիւտանեան այն ժամանակ, երբ տաք զօրապետներին, որոնք ծովային պատերազմից յետոյ չէին ժողովել մեռածների դիակները, ուզում էին միտձայն դատապարտել, հակառակ օրէնքի, ինչպէս յետոյ բոլորիդ համար էլ պարզուեց: Այդ ժամանակ միայն ես պրիտաններին հակառակում էի ձեզ, չվարուել հակառակ օրէնքի և հակառակ էլ քուէ տուի և մինչդեռ հետաքննելը պատրաստում էին ինձ մեղադրել և բանտը տանել, դուք էլ

*) 500-ի ժողով. անդամ ընտրւումէին առաջին երեք դատակարգից 30 տարեկանից վեր եղողները: Քաղաքը բաժանւում էր 10 ֆիլէի, ամեն ֆիլէից 50 մարդ էին ընտրւում մի տարե ժամանակով:

պահանջումէիք և աղաղակում, ես վճռել էի աւելի շատ վտանգի ենթարկուել, արդարութիւնը և օրէնքը պահելով, քան թէ մահուանից և կապանքներից վախենալով ձեր անարդար վճռի հետ միանալ։ Այս այն ժամանակն էր, երբ քաղաքը կառավարում էր ժողովրդապետութիւնով, իսկ երբ կառավարութիւնը փոխուեց օլիգարխիայի, երեսունը ինձ նորից ընտրելով իբրև հինգերորդ անգամ կանչեցին ժողովատեղին, հրամայեցին մեզ Լէօնտ Սալամիսայուն Սալամիսեց բերել, որ սպանեն։ Այդպիսի շատ հրամաններ և շատերի վերաբերմամբ տուել էին, աշխատելով որքան կարելի է շատերին մասնակից անել եղեռնագործութիւններին. այդ ժամանակ ոչ թէ խօսքով, այլ գործով ապացուցի, ներեցէք համարձակութեանս, որ աւելի շատ մահը կընտրեմ, միայն թէ անարդար և մեղադրելի բան չանեմ։ Այս բանին է ուղղած եղել ամբողջ հոգսը։ Այդ իշխանութիւնը այնքան ուժեղ լինելով հանդերձ չկարողացաւ ինձ վախեցնել, որ անարդար վարուէիս երբ ժողովից դուրս եկայ չորս հոգի գնացին Սալամես Լէօնտին բերելու, իսկ ես գնացի տուն։ Գուցէ ինքս էլ այդ պատճառով մահուան դատապարտուէի, եթէ այդ իշխանութիւնը *) կարճ միջոցում չքայքայուէր։ Այս մասին էլ կարողէք շատ վկաներ գտնել։

XXI. Միթէ կարծում էք, որ այսքան տարի կապրէի, եթէ հասարակական գործերով զբաղուէի և միևնոյն ժամանակ բարի մարդուն վայել կերպով աշխատէի և շտապէի օգնելու արդարներին ինչպես որ հարկն է։ Շատ դժուարէ, ո՞վ ամենացիններ և ոչ մի ուրիշ մարդու չի յաջողուիլ իմ ամբողջ կեանքում և հասարակական գործերում, եթէ միայն այդպիսին գործ արել եմ և մասնաւոր կեանքում մնացել եմ միշտ միևնոյն. ոչ ոքի երբէք տեղի չեմ տուել արդարացի գործում և ոչ մէկին նրանցից, որոնց իմ մեղադրողները ասում են, թէ իմ աշակերտներն են։ Ոչորքի երբէք ուսուցիչ չեմ եղել, եթէ մէկը ցանկացել է խօսելուս կամ գործելուս ժամանակ լսել կամ

*) 30 Բռնապետների իշխանութիւնը տեեց միայն 8 ամիս։

տեսնել, երիտասարդ թէ ձեր երբէք ոչորի արգելք չեմ եղել և ոչ թէ երբ փող եմ առել, խօսել եմ, իսկ երբ ոչ, չեմ խօսել: այլ հաւատարապէս թէ աղքատին, թէ հաւուստին թոյլ եմ տուել ինձ հարցնել եթէ մէկը ցանկանում էր հարց ու պատասխանի ձևով խօսել, կարող էր լսել այն բանի մասին, որի մասին խօսումէի: Եթէ նրանցից մէկը օգտակար էր դառնում՝ միւսը ոչ, այսպէղ ես մեղաւոր չեմ, որովհետև ոչ որի չեմ խոստացել գիտութիւն տալ կամ սովորեցնել: Եթէ մէկը ասում է, որ ինձանից որեւէ ժամանակ մասնաւոր կերպով մի բան է սովորել կամ լսել, ինչոր ուրիշները չեն լսել կամ սովորել, լնւ իմացէք, որ ճշմարիտ չէ ասում:

XXII. Բայց ինչո՞ւ համար մի քանիսը սիրում են ինձ հետ երկար ժամանակ անցկացնել: Դաք արդէն լսեցիք, ո՞վ աթէնացիներ, իսկական ճշմարտութիւնը ասացի, որ ինձ լսելով գուարճանում են, երբ քննում եմ նրանց, որոնք կարծում են թէ իմաստուն են, բայց չեն իսկապէս: անհետաքրքիր բան չէ: Ինձ էլ աստուած է նշանակել, ինչպէս ասացի, այսպէս դործելու և գուշակի և երազի և միւս նշանների միջոցով, սրանցով աստուածային կամքը այսպիսի դէպքերում՝ մարդուն յայտնում է, որոչ կերպ դործելու համար: Այս բանը ճշմարիտ է, ո՞վ աթէնացիներ և կարելի է շուտով ապացուցանել: Եթէ երիտասարդներից մի քանիսին փչացրել եմ, անկասկած նրանցից մի քանիսը հասակաւոր դարձած լինելով պէտք է հասկանան, որ նրանց երիտասարդ եղած ժամանակը վատ բաներ եմ խորհուրդ տուել և փչացրել: այժմ կարող են դալ այստեղ ինձ քննել, մեղադրել և վրէժ լուծել: Եթէ նոքա չեն եկել, նրանց տներից մի քանիսը՝ հայրերը կամ եղբայրները կամ միւս ազգականները, եթէ իմ պատճառով որեւէ միայն են կրել, իրենք պէտք է որ յիշէին և ինձանից վրէժ լուծէին: Իսկապէս նրանցից շատերը ներկայ են, որոնց տեսնում եմ. այսպէս այս կրիտոնը իմ հասակակիցը և թաղակիցը, կրիտտօրոլոսի հայրը, յետոյ Լիւսանան, Սֆէտտի քաղաքամասից, ահա այս խիօսը, նրա

հայրը. այս Անտիփոն կէֆէսացին, էպիֆոնէսի հայրը. կան
և ուրիշները, որոնց եղբայրները իմ զրուցատրութիւննե-
րին ներկայ են եղել օրինակ Նիկոստրատոս, Թէօֆօտիդի
որդին, Թէօֆօտի եղբայրը. Թէօֆօտը մեռաւ, այնպէս որ
չկարողացաւ եղբօրը խնդրել որ իմ դէմ չխօսի. Ահա
Պարուլօսը, Դէմօֆօսի որդին, որի եղբայրն է Թէագէօրը
ահա և Ագէլմօնտօսը, Արիստոնոսի որդին, որա եղբայրն է
Պղատանը և Այանտատօսը, որի եղբայրն է Ապօլլօդօրօսը:
կարող եմ թուել և շատ ուրիշներին, որոնցից դոնէ մէ-
կին կարող էր Մելէտը իւր մեղադրականութիւն վկայ բերել:
Եթէ այն ժամանակ մօռացել է այդանել, թող այժմ ցոյց
տայ, թոյլ եմ առլիս, թող ասի, եթէ այդպիսի մէկին
ճանաչում է: Բայց բոլորովին հակառակը կտեսնէք, ո՞վ
մարդիկ, բոլորը ուրախութեամբ կօգնեն ինձ փշաջնոցիս
նրանց անեցնիներին քնա հապնողիս, ինչպէս Մելէտն
ու Անխտոնն են ասում: Իրենք փշաջածները աւելի շուտ
կօգնեն ինձ, իսկ ոչ փշաջածները ուրիշ ինչ հիման վրայ
կարող են ինձ օգնել, բայց եթէ արդար և ճշմարիտ հա-
մոզմունքով, որ Մելէտը ստում է, իսկ ես ճշմարիտն
եմ ասում:

XXIII. Ահա, ո՞վ մարդիկ, այն, ինչ որ կարող էի ա-
սել իմ պաշտպանութեան համար մօտաւորապէս, այսպէս
թէ այնպէս: Չեղանից մէկը կարող է զայրանալ յիշելով
իւր մասին, թէ ինչպէս, երբ ինքը պակաս կարեւոր գործ
էր պաշտպանում քան ես այժմ, խնդրում էր և աղա-
չում, արտասուք թափելով դատաւորների առջ, հետը
բերելով իւր որդիներին, որ աւելի ազդէ և իւր ընկերնե-
րից ու բարեկամներից շատերին, իսկ ես չեմ անում այդ,
չնայելով, ինչպէս երևում է, աւելի լուրջ փառնգի մէջ
եմ: Ուստի գուցէ մէկը ինկատի սեննալով այս բանը ա-
ւելի անողոր դառնայ դէպի ինձ և զայրացած լինելով
այդ տպաւորութեան տակ էլ իւր քուէն տայ, եթէ միայն
ձեր մէջ կայ այդպիսի մէկը: Ի հարկէ չեմ կասկածում,
բայց եթէ այդպիսին կայ, կործում եմ, իրաւացի կլինի,
եթէ նրան ասեմ, որ ես, ո՞վ ազնիւ, ունիմ մի քանի աղ-

գաղաններ, որովհետեւ Համերոսի խօսքով ասած, ոչ ծառից
և ոչ էլ քարից եմ ծնուել, այլ մարդուց. այնպէս որ ազ-
գաղաններ էլ ունիմ, երեք որդի էլ, մէկը արդէն երիտա-
սարդ է, երկուսը դեռ երեխաներ են, այնուամենայնիւ
նրանցից և ոչ մէկին այստեղ չեմ բերել խնդրելու, որ ինձ
հակառակ քուէ չտան: Ինչո՞ւ այս միջոցներից և ոչ մէկը
չեմ գործադրում, ոչ հպարտութիւնից և ոչ արհամարհան-
քից դուրս: Եւ ավթէնացիներս Աներկիւղ եմ գէպի մահը
թէ ոչ, այդ ուրիշ բան է, միայն ձեր, իմ և ամբողջ քաղաքի
պատուի համար կարծում եմ: այդ միջոցներից և ոչ մէկը
չպէտք է գործադրել. այն էլ այս հասակումս և իրաւամբ
թէ ոչ այդպիսի համբաւի տէր լինելով, Այսպէս թէ այնպէս
այն կարծիքը կայ, որ Սոկրատէսը միւս մարդկանցից մի բա-
նով գերազանցում է: Չեզանից նրանք, որոնք աչքի են
ընկնում կամ իմաստութեամբ կամ քաջութեամբ կամ
մի ուրիշ առաքինութեամբ, եթէ այդպէս վարուեն ամօ-
թալի կլինին: Այնպիսի շատերին եմ տեսել դատի ժամա-
նակ որոնք կարծում են, թէ իսկապէս մի բան են, բայց
զարմանալի կերպով են վարում, կարծելով, որ սարսա-
փելի բան է մեռնելը. իբր թէ անմահ կմնան, եթէ դուք
չդատապարտէք նրանց: Այդպեսիները, կարծում եմ,
քաղաքին մեծ ամօթ են հասցնում, քանի որ որ և է օտա-
րական կարող է կարծել, որ ավթէնացիներից առաքինու-
թեամբ գերազանցողները, որոնց արժանի են համարում
բարձր պաշտօնների և այլ պատիւների, կանանցից ոչ մի
բանով չեն տարբերւում: Ո՞վ ավթէնացիներ, ոչ դուք պէտք
է անէք այդպիսի բաներ, թէև կարծում էք, որ և է նշա-
նակութիւն ունի և ոչ էլ մեզ պիտի թոյլ տաք անել,
այլ պէտք է ցոյց տաք, որ աւելի շուտ նրան էք պատժում,
ով այդպիսի տեսարաններ է ներկայացնում և պետութիւնը
ծաղրի առարկայ դարձնում, քան նրան, ով իրեն հան-
դարտ է պահում:

XXIV. Բացի վատ համբաւից, եւ մարդիկ, կարծում
եմ, որ արգարացի չէ նաև խնդրել դատաւորին վճուից
խուսափելու համար, այլ պէտք է հասկացնել և համոզել,

որովհետեւ դատաւորը ոչ թէ նրա համար է նշանակուած, որ ճշմարտութիւնը ի հոգոյս մէկին զօհի, այլ արդարութեամբ դատիւ նա երգուել է, ոչ թէ ներողամտութիւն ցոյց տալ, ում որ ինքը կրարհաճի, այլ օրէնքների համաձայն դատել. հետեապէս ոչ մենք ձեզ պէտք է երգմնազանցութեան սովորեցնենք և ոչ էլ ինքներդ սովորէք, որովհետեւ մեզանից ոչ ոքի այդ բանը պատիւ չի բերում: Հետեապէս, ճվաթէնացիներ, մի կարծէք, որ ձեզ հետ այնպէս կվարուիմ, ինչպէս կարծումեմ, որ ոչ գեղեցիկ, ոչ արդարացի և ոչ էլ վայելուչէ, մանաւանդ այժմ, Զեւր վկայ, երբ Մելէտը ինձ անաստուածութեան մէջէ դատապարտում: Պարզ է, որ եթէ ձեզ համոզէի ուշք չդարձնելով ձեր երգմնազանցութեանը, զօռով խնդրելով, ձեզ կսովորեցնէի աստուածներին չհաւատալ և այն ժամանակ անկարող կլինէի պաշտպանուել այն մեղադրանքների դէմ, որ ես աստուածներին չեմ հաւատում, բայց բանն իսկապէս այդպէս չէ: Ես հաւատում եմ, ճվաթէնացիների, ինչպէս և ոչ մէկը ինձ մեղադրողներից և ձեզ ու աստծուն եմ թողնում դատելու այնպէս, ինչպէս աւելի լաւ կլինի և ինձ և ձեզ համար: *)

XXV. Ո՞վ աթէնացիներ, ձեզ վրայ չեմ զայրանում այս եղածի համար, որ ինձ դատապարտել էք. բացի ուրիշ շատ պատճառներից ինձ դրդում է և այն, որ այդ ինձ համար անսպասելի չէր: Աւելի զարմանում եմ երկու կողմից եղած ձայների թուի վրայ: Կարծումէի, որ տարբերութիւնը այդքան քիչ չէր լինի, այլ աւելի մեծ. երևում է, որ եթէ 30 հոգի յօգուտ ինձ ձայն տային, կազատուէի**): Մելէտի մեղադրանքից ազատուեցի և ոչ միայն ազատուե-

*) ձառի առաջին մասը այստեղ վերջանում է: Դատաւորները գնում են խորհրդակցելու: Սոկրատէսին ձայների մեծամասնութեամբ մեղաւոր են ճանաչում: Սոկրատէսի այս դատը պատկանում է ἀγώνες τεղτοί կոչուած դատերին. այդպիսի դատի ժամանակ, մեղադրեալը ինքը կարող է առաջարկել իւր պատժի ձևը:

**) Սոկրատէսին մեղադրել էին 280 կայնով ընդդէմ 220-ի: Զայնների հաւատար եղած դէպքում մեղադրուողը ազատւում էր:

ցի, այլ որ աղքէն ամենքի համար էլ պարզ է, եթէ Անըխտը, Լիկոնը չդային ինձ մեղադրելու, այդ դէպքում՝ 1000 դրախմ էլ պիտի վճարէր ձայների մէկ հինգերորդ մասը չտանալու պատճառով։*)

XXVI. Այս մարդն ուրեմն ինձ մահուան արժանի է համարում. թող այսպէս լինի. Ո՛վ աթէնացիներ, ինձ ինչ պատիժ նշանակեմ. պարզէ, որ յանցանքիս արժանի պատիժ։ Ի՞նչ պատիժ կրեմ՝ և կամ ինչ տուգանքի ենթարկուիմ այն բանի համար, որ կեանքումս հանգստութիւն չունենալով՝ սովորեցրել եմ միշտ, ուշք չեմ դարձրել ուրիշների նման հարստութեան, տնտեսութեան, զօրապետութեան, ժողովրդական հետտորութեան և ուրիշ պաշտօնների վրայ. չեմ մասնակցել դաւադրութիւնների, կուսակցութիւնների, որոնցով քաղաքը լի է. որովհետեւ կարծում էի, որ իսկապէս այնքան ազնիւ եմ, որ այդ ճանապարհով գնալով չեմ ազատուի և չէի էլ գնում. գնալով ոչ ձեզ և ոչ էլ ինձ ոչ մի օգուտ չէի կարող տալ։ Ձեզանից իւրաքանչիւրին, աշխատելով մասնաւոր կեանքում մեծ օգուտ տալ, աշխատում էի համոզել, որ իւր գեղեցկութեան մասին մտածելուց առաջ ուշք դարձնի որքան կարելի է ազնիւ և խելացի դառնալու վրայ։ Այսպէս էլ պետութեան գործերի մասին հոգալուց առաջ, պէտք է պետութեան մասին մտածի. ապէս և մնացած բաների նկատմամբ։ Ուրեմն լինելով այդպիսի մէկը ինչի՞ եմ արժանի։ Մի բարի բանի, ո՞վ աթէնացիներ, եթէ միայն ծառայութիւնը ճշմարտութեամբ պիտի գնահատուի և այնպիսի մի բարիք, որ ինձ վայել լինի։ Ի՞նչ է վայել մի բարեգործ խեղճ մարդու, որը ուզում է հանգստութիւն վայելել և ձեզ խրատել. Ի՞նչ աւելի վայելուչ բան, ո՞վ աթէնացիներ, քան Պրիտանեսայում ճաշելը**)։ աւելի

*) 1000 դրախմը մօտ 250 մանէթ է։ Երբ մեղադրողը չէր կարողանում հաստատել մեղադրանքը, այդքան տուգանք էր վճարում և մի քանի իրաւունքներից զրկւում։

**) Պրիտանեսան հասարակական մեծ շինութիւններից էր. այտեղ ճաշում էին գուշակները, օտարազգի դեսպանները, այն քաղաքացիները որոնք պետութեանը կարևոր ծառայութիւն էին արել։

չատ արժանի եմ՝ ես, քան ձեզանից նրանք, որոնք ոչիմ-
պիական խաղերի ժամանակ կամ ձիով կամ երկձի կամ
քառաձի կառքով յաղթող են եղել, որովհետեւ այդպի-
սիները ձեզ միայն կարծել են տալիս, որ երջանիկ էք,
իսկ ես իսկապէս աշխատում եմ ձեզ երջանիկ դարձնել.
այնպիսին կարիք չունի խնամուելու, կերակրուելու, իսկ ես
կարիք ունիմ։ Ուստի եթէ եմ ծառայութեան համար ար-
դար պատիժ պիտի նշանակեմ, ապա ես կ'նշանակէի հե-
տեւալը՝ Պրիտանիայում ճաշել։

XXVII. Դուք է՛կզ թուայ, որ այս դէպքում էլ այնպէս
եմ վարւում ինչպէս ներողութիւն խնդրելու դէպքում
ապրելու համար, այսինքն հպարտութեամբ, այդպէս չէ՛, ո՛վ
աթէնացիներ, այլ աւելի շուտ այսպէս՝ համոզուած եմ,
որ մարդկանցից ոչ ոքի կամուտը կերպով փնտա չեմ հա-
ցրել բայց ձեզ համոզել չեմ կարող, որովհետեւ միմեանց
հետ կարճ ժամանակ խօսեցինք։ Եթէ, ինչպէս կարծում
եմ, ձեր միջօրէնք լինէր, ինչպէս ուրիշների մէջ կայ, որ
մահուան դատապարտելիս ոչ թէ մի, այլ մի քանի օր
դատէիք, կ'համոզուէիք։ Այժմ՝ այս կարճ ժամանակում
այնքան մեծ մեղադրանքի դեմ պաշտպանուելը հեշտ չէ՝
համոզուած լինելով, որ ոչ ոքի չեմ փնտսել, աւելի ես
ինձ չեմ կարող փնտսել և ինքս ինձ հակառակ խօսել, որ
իբր ես արժանի եմ պատժի և այս ինչ կերպ պէտք է
պատժել։ Ի՞նչ հիման վրայ արդեօք չեն ենթարկում այն
պատժին, որին Մելէտը ինձ արժանի է համարում, օրի
համար ասացի չգիտեմ, բարիէք է թէ չարիք, Ընտրեմ
արդեօք այն պատիժներից մէկը, որոնց մասին գիտեմ,
որ չարիք են և նրանով պատժուեմ։ Արդեօք բանտարկու-
թիւն, բայց ինչու պէտք է բանտում ապրեմ և հպատա-
կուեմ նշանակուած տաան և մէկի *) իշխանութեանը՝
թէ դրամական տուգանք և միւս կապանքներում, մինչև
որ ամբողջը վճարեմ, բայց այդ նոյն բանն է, որովհետեւ

*) Ամեն տարի ընտրում էին Էւրոքանչիւք Ֆիլից մէկ մէկ
մարդ և մի քարտուղար, ընդանենը 11 հոգի։ Սոքա մեծ մա-
սամբ հսկումէին բանտերի վրայ։

փող չունիմ, որ վճարեմ: Գուցէ աքոռի եմ արժանի, գուցէ հէնց այդ էք որոշել: Այս գէպքում կերևայի կեանքը սիրող մէկը, եթէ այնքան յիմար լինէի, որ չկարողանայի հասկանալ այսքանը, թէ եթէ ձեզ, իմ քաղաքացիներին, համար անկարելի է դարձել իմ զրուցատալ ժամները լսելը և ձեզ համար մի աւելորդ ծանրութիւն եմ դարձել և աշխատում էք ինձանից ազատուել, միթէ ուրիշները հեշտութեամբ կտանեն այդ բոլորը, այդպէս չէ, ով ամէնացիներս: Լաւ, կլինէր եմ կեանքը, եթէ այս հաստիւմ, հայրենիքից հալածուած, քաղաքից քաղաք թափաւէի: Լաւ գիտեմ, որ ուր էլ գնամ, երբ երկտասարդներին հետ խօսեմ՝ կլսեմ՝ այնպէս, ինչպէս, և այստեղ: Եթէ նրանց մերժեմ, իրենք ինձ կարտաքսեն, եթէ չմերժեմ՝ նրանց հայրերը և ազգականները նրանց միջոցով կարտաքսեն:

XXV^{III}. Գուցէ մէկը ասի—միթէ ով Սոկրատէս, աքսորուելով չես կարող լաւ կեանք վարել: Այդ բանում ձեզ համոզելը ամենից դժուարն է, որովհետեւ երբ ասում եմ, որ այդ կնշանակէ Աստծուն չհնազանդուել, ուստի և հանգիստ կեանք վարել չեմ կարող, չէք հաւատում, կարծում էք, թէ ձեռացնում եմ այդպէս, եթէ ասում եմ, որ ամենից մեծ բարիքն է մարդու համար ամենայն օր խօսել առաքինութեան և այլ նման բաների մասին, որոնց մասին ինձ խօսելիս և ուրիշներին քննելիս լսել էք և որ առանց կեանքը քննելու չպէտքէ ապրել, այդ բանին աւելի ևս չէք հաւատում: Ինչպէս ասացի, այդ բանում ձեզ համոզելը այնքան էլ հեշտ չէ, Բացի այդ սովոր չեմ ինձ արժանի համարել որեւէ չարիքի: Եթէ փող ունենայի տուգանք կնշանակէի այնքան, որքան կարող եմ վճարել, որովհետեւ այդ բանից, ոչ մի վնաս չեմ կրի: Սակայն այդքան մեծ կարողութիւն չունեմ, եթէ կրաւականանք այնքանով, որքան կարող եմ տալ, կնշանակեմ մի մնասարժած*): Իսկ սոքա, ով ամէնացիներ, Պղատոնը, Կրի-

*) Մօտ 24 մանէթ, շատ չնչին գումար է համեմատած ուրիշներին տուգանքներին հետ: Միլտիադէսը տուել է 50 տաղանդ, իսկ մի մնասը հաւասար է ¹/60 տաղանդի:

տոնը, Կրիստոբորուսը և Ապոլլոդորոսը ասում են, որ 30 մնաս նշանակեմ. իրենք յանձն են առնում տալ, ուրեմն նշանակում եմ 30 մնաս, փողի կողմից սրանք արժանահաւատ երաշխաւորներ են: *)

XXIX. Կարճ ժամանակամիջոցի պատճառով, ճիշդ Աթէնացիներ, վատ համբաւ կատանաք և կմեղադրուէք նրանց կողմից, որոնք աշխատում են բամբասել քաղաքում, որ սպանեցիք Սոկրատէսին, իմաստուն մարդուն, որովհետեւ նրանք, որոնք ուզում են ծաղրել, կասեն, որ իմաստուն էր, թէեւ չեմ: Եթէ մի քիչ էլ համբերէիք, այդ բանը ըստ ինքեան լինելու էր: Տեսնում էք, որ ծերացել եմ և մահս մօտ է, ձեզ բոլորիդ չէմ ասում այս, այլ նրանց, որոնք ինձ մահուան են դատապարտել: Նրանց ասում եմ հետեւեալը. գուցէ կարծում էք, ճիշդ մարդիկ, որ ինձ պակասում էին խօսակցութեան այն ձեւերը և խօսքերը, որոնցով ձեզ կարող էի համոզել: Եթէ միայն մտածէի, որ պէտքէ ամեն բան անել և խօսել դատապարտուելուց տղատուելու համար, հազիւ թէ ինձ պակասում էին ոչ թէ խօսքեր, այլ յանդգնութիւն, աներեսութիւն և ցանկութիւն ձեզ հետ այնպէս խօսելու, ինչպէս ձեզ հաճելի կլինէր, որ լաց լինէի, խնդրէի և ինձ շատ անվայել բաներ անէի և խօսէի, որոնց սովորել էք ուրիշներից լսելու: Ինչպէս որ այն ժամանակ ասում էի, որ որեւէ վախի պատճառով անվայել բան չպէտքէ անել, այժ էլ չեմ զղում, որ այդպէս եմ պաշտպանուել, աւելի շուտ ընտրում եմ այս եղանակով պաշտպանուելն և մեռնելը, քան այնպէս պաշտպանուել և ապրել որովհետեւ ոչ դատարանում և ոչ պատերազմում ոչ ես և ոչ ուրիշը չպէտք է միջոցների փնտրենք մահուանից ազատուելու: Պատերազմներում շատ անգամ ակնյատնի է լինում, որ

*) Տեղի է ունենում երկրորդ անգամ քուէարկութիւն. Սոկրատէսի հակառակորդների թիւը աւելանում է 80-ով: այնպէս որ լինում է 360 ձայն ընդդէմ 140-ի:

հեշտութեամբ մահուանից կարելի է խուսափել, եթէ զէնքերդ յանձնես և հարուածողներին ներողութիւն խնդրես։ Կան զանազան միջոցներ ամեն վտանգի ժամանակ մահուանից խուսափելու, եթէ միայն մարդ համարձակութիւն ունենայ ամեն բան անելու, բայց դժուարը մահուանից խուսափելը չէ, ո՛վ մարդիկ, այլ աւելի դժուար է ստորութիւնից խուսափելը, որովհետեւ սա մահուանից առաջ է վազում։ Դանտաղաշարժ և ծեր լինելով աւելի դանդաղին (մահուան) եմ ենթարկուում, իսկ ինձ մեղադրողները, իբրեւ աւելի ուժեղ արագուշարժ մարդիկ ենթարկուում են աւելի արագաշարժին (ստորութեանը)։ Այժմ՝ հեռանում եմ ձեզանից մահուան դատապարտուած, իսկ նրանք ճշմարտութիւնից դատապարտուած հեռանում են չարութեան և անարդարութեան համար։ Ես էլ, նոքա էլ կենթարկուենք մեր պատիժներին, կարծում եմ որ այդպէս էլ պէտք է լինէր և այդպէս էլ վայել էր։

XXX. Այս բոլորից յետոյ իմ մէջ ցանկութիւն է զարթնում դուշակելու, թէ սրանից յետոյ ի՞նչ կլինի, որովհետեւ այն դրութեան մէջ եմ, երբ մարդիկ ամենից աւելի են գուշակում, այսինքն, երբ մահուան են մօտենում։ Ո՞վ մարդիկ, ինձ մահուան պատապարտողներ, Չեսը վկայ, որ իմ մահուանից յետոյ աւելի ծանր պատիժ կստանաք, քան ինձ մահուան դատապարտելն է։ Այժմ այսպէս վարուելով, կարծում էք, որ ձեր կեանքում կխուսափէք ձեզ հաշիւ տալուց, բայց, ինչպէս տաւում եմ, բոլորովին հակառակը կպատահի։ Շատերը կսկսեն ձեզ քննել, որոնց յետ էի կազնեցնում, իսկ դուք չէիք նկատում և այնքան աւելի խիստ, որքան աւելի երիտասարդ լինեն, դուք էլ աւելի կզայրանաք։ Եթէ կարծում էք մարդկանց սպանելով կազատուէք այն կշտամբանքից, որ կանոնաւոր կեանք չէք վարում, ուղիղ չէք մտածում, որովհետեւ այդ եղանակով ազատուելը ոչ այնքան հնարաւոր է և ոչ այնքան լաւ, այլ այն աւելի լաւ է և հեշտ, որ ոչ թէ ուրիշներին ճնշես, այլ ինքդ քեզ որքան կտրելի է աւելի կատարեալ լինելու պատրաստես։ Ահա այս դուշակելով ձեզ համար, ինձ դատապարտողներ, հեռանում եմ։

XXXI. Յօգուտ ինձ ձայն տուողների հետ ուրախութեամբ կիսուեմ՝ այս եղած դործի մասին, քանի դեռ արխօնները զբաղուած են և քանի դեռ չեմ գնացել այնտեղ, որտեղ ինձ մահն է սպասում։ Աւրեմն, ով մարդիկ, մնացէք այսքան ժամանակ, որովհետեւ ոչ մի արգելք չկայ միմեանց հետ խօսակցելու, որքան թայլատրելի է։ Ձեզ, իմ բարեկամներին, ցանկանում եմ՝ ցոյց տալ, թէ այժմ ինձ հետ պատահածը ինչ է նշանակում։ Ինձ հետ ով դատաւորներ, ձեզ իրաւամբ կարող եմ դատաւորներ ասել, մի զարմանալի բան պատահեց։ Իմ սովորական սգու ձայնը որը նախկին ժամանակներում շատ դէպքերում յաճախ երևում էր և ամենափոքր անարդարացի բանին անգամ, եթէ ուզում էի անել, հակառակում էր, այժմ ինչպէս ինքներդ էք տեսնում պատահեց այն, ինչ որ սովորաբար կարծում են թէ չարիք է, այժմ այդ սգու ձայնը ինձ չհակառակեց, երբ առաւօտեան տանից դուրս եկայ, ոչ դատարան բարձրանալիս և ոչ էլ ճառի ժամանակ, ուրիշ ճառերի ժամանակ և շատ անգամ խօսքի կիսում ինձ արգելում էր, այժմ ոչ դործիս և ոչ խօսքիս մէջ ոչ մի կերպ չհակառակեց։ Արդեօք սրա պատճառը ինչը համարիմ։ Կարծում եմ, որ ինձ հետ պատահածը մի բարիք է և որ ուզիդ չենք դատում, երբ կարծում ենք, թէ մեռնելը մի չարիք է։ Այս բանի համար մեծ ապացոյց ունեմ, անկարելի է, որ իմ սովորական ներքին ձայնը ինձ չհակառակէր, եթէ մի լաւ բան անել չկամենայի։

XXXII. Ենթադրենք այսպէս, իբր թէ մեծ յոյս կայ, որ դա մի բարիք է։ Մահը երկուսից մէկն է, կամ մեռնողը բոլորովին ոչնչանում է և ոչ մի բանի զգացում չունի, կամ թէ, ինչպէս ասում են, մի փոփոխութիւն է պատահում, հոգին այստեղից փոխադրւում է մի այլ տեղ։ Եթէ այդ դէպքում ոչ մի զգացում չի մնում, այլ ինչպէս քուն, երբ մէկը քնում է և ոչ մի երազ չի տեսնում, այդ դէպքում մահը զարմանալի օգտաւէտ բան կլինէր։ Եթէ մէկը ընտրելու լինի այն գիշերը, երբ այնպէս է քնել, որ երազ էլ չի տեսել և համեմատի այդ գիշերը իւր կեանքի

մնացած օրերի և գիշերների հետ, կարծում եմ, կնկատի, որ այդ գիշերուանից աւելի լաւ և քաղցր գիշեր իւր կեանքում չի ունեցել, կարծում եմ, ոչ միայն հասարակ մարդը, այլ նոյն իսկ մեծ Թագաւորը *) շատ հեշտութեամբ այդ գիշերը մնացած գիշերներից և օրերից կգերազանէր: Եթէ ուրեմն մահը մի այդպիսի բան է, ապա նա բարիք է, որովհետեւ այդ գէպըում՝ ամբողջ կեանքը ոչնչով լաւ չէ մի գիշերուանից, Իսկ եթէ մեռնողը այստեղից փոխադրւում է վի ուրիշ տեղ և ճշմարիտ է, որ ասում են, թէ բոլոր մեռնողները այնտեղ են, էլ ինչ աւելի մեծ բարիք կարող է լինել, ո՞վ դատաւորներս եթէ մէկը գնում է Հագէս ազատուելով այս իրենց դատաւոր անուանողներից և այնտեղ գտնում է ճշմարիտ դատաւորներ, ինչպէս ասում են այնտեղ դատում են Մինասը, Հաղաւորասը, Էսկուրը և Տրիպտուլէմասը և կիսատուածներից նրանք, որոնք իրենց կեանքում արդար են եղել, Միթէ տեղափոխութիւնը մի վատ բան կլինէ: Զեզանից ո՞վ չէր ուզի, ինչ գնով էլ լինի, տեսնել Օրֆէասին, Մոպային, Հեսթոպին և Հոմերոսին, եւ գոնէ կուզէի շատ անգամ մեռնել, եթէ այդ ճշմարիտ է: Ինձ համար այնտեղ կեանք վարելը շատ հետաքրքիր է, կպատահեմ Պալմիրէասին, Այաքս Տէլէմոնեանին և հներից նրանց, որոնք անարդար պատիժ են կրել, իմ վիճակը կհամեմատէի նրանց հետ՝ կարծեմ, այս այնքան էլ անհաճոյ բան չէ: Իսկ որ ամենագլխաւորն է, այնտեղ եղածներին կքնենք, հարցովորձ կանեմ, ինչպէս և այստեղ եմ անում, թէ ո՞վ նրանցից իմաստուն է և ո՞վ միայն կարծում է, բայց իսկապէս չէ: Դատաւորներից ո՞վ արդեօք չէր ցանկանայ, ինչ գնով էլ որ լինի, քննել Տրոյայի դէմ՝ մեծ բանակը առաջնորդողին և Ոգիսեսին կամ Սիզիֆոսին և կամ՝ ուրիշ շատերին, թէ կանանց և թէ մարդկանց, այնտեղ նրանց հետ խօսել, միասին լինել, քննել, որանից աւելի մեծ երջանկութիւն կլինի: Անկասկած այնտեղ էլ այս բանի համար չեն սպանում (ինչպէս այստեղ):

*) Խօսքը պարսկից Թագաւորի մասին է:

Բայց այդ նրանք աւելի երջանիկ են այստեղ եղողներից նրանով, որ ապագայում նրանք անմահ են լինելու, եթէ միայն այս առթիւ ասածները ճիշտ են:

XXXIII. Դուք էլ, ով դատաւորներ, մահուանից վառ բան մի սպասէք և հաւատացած եղէք, որ բարի մարդուն ոչ մի վառ բան չի պատահիլ, ոչ այս կեանքում և ոչ էլ մահուանից յետոյ: Աստուածները անուշադիր չեն թողնում նրանց գործերը, այնպէս էլ և այս, ինչ որ ինձ հետ պատահեց ինքնաբերաբար չեղաւ: Ինձ համար պազ է, որ արդէն մեռնելը և այս գործերից ազատուելը ամենից լաւն է, ուստի և իմ ներքին ձայնը ինձ չհակառակեց և ես էլ ոչ ինձ դատապարտողների և ոչ էլ մեղադրողների վրայ չեմ դայրանում, թէև նրանք այդ մտքով չդատապարտեցին ինձ, այլ կամենում էին ինձ չարիք հասցնել և այդ բանի համար նրանք յանդիմանութեան արժանի են: Այնուամենայնիւ նրանց խնդրում եմ, երբ իմ որդիքը մեծանան, պատժել նրանց, ով մարդիկ, վշտացնելով այն բանի համար, ինչի համար ձեզ վշտացնում էի, երբ երեւոյ, որ փողի կամ մի այլ բանի համար աւելի շատ են հոգում, քան առաքինութեան և երբ կարծեն, թէ մի բան են, բայց իսկապէս չեն: Նախատեցէք նրանց ինչպէս ձեզ էի նախատում, որ ինչի համար որ պէտք է մտածեն, չեն հոգում և կարծում են, թէ մի արժանիք ունեն, մինչդեռ ոչնչի պէտք չեն: Եթէ այսպէս վարուէք, ես և իմ որդիքը ձեզանից ստացած կլինինք այն, ինչ որ արդարացի է: Բայց արդէն ժամանակ է—ինձ մեռնելու: Իսկ թէ մեզանից ով աւելի լաւ գործի է գնում, ոչ ոքի յայտնի չէ բացի աստծուց:

Բնագրից թարգմանեց Pessimist

